Հարգելի տիկին Դոյդոյան,

Ի պատասխան Ձեր 14.01.2020թ. հարցմանը, հայտնում ենք.

1. 2018 թվականին Հանրապետության նախագահի աշխատակազմը ստացել է թվով 48 հարցում, իսկ 2019թ.՝ 117 հարցում:

2. 2018 թվականին ստացված հարցումներից 34-ը ստացվել են էլեկտրոնային եղանակով, իսկ 14-ը՝ թղթային:

2019 թվականին ստացված հարցումներից 99-ը ստացվել են էլեկտրոնային եղանակով, իսկ 18-ը՝ թղթային:

3. 2018 թվականին ստացված հարցումներից 27-ը, իսկ 2019 թվականին ստացված հարցումներից 68-ը ստացվել են լրագրողների/լրատվամիջոցների կողմից:

4. 2018 և 2019 թթ.-ի ընթացքում գրանցված տեղեկություն ստանալու բոլոր հարցումները բավարարվել են 5-օրյա ժամկետում, դրանցից որևէ մեկը չի մերժվել կամ վերահասցեագրվել:

Հանրապետության նախագահի աշխատակազմի հասարակայնության հետ կապերի վարչություն